ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ



ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐ ԱՔԵՂԱ ԵՂԻԱՅԱՆ։— Ծնվել է 1926 թվականին Բեթղեհեմում։ Ավազանի անունն է Հովհաննես։

Նախնական կրթությունն ստացել է Երուսաղեմի Սրբոց Թարգմանչաց վարժարանում, իսկ միջնակարգը՝ Երուսաղեմի «Բիշոպ Գոբաթ» դպրոցում։ Ապա գործոն մասնակցություն է ունեցել Պաղեստինի մշակութային կազմակերպություններում։

Հայրենադարձվել է 1948 թվականին։

1958 թվականին մտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը, հաջողությամբ հանձնելով աբեղայական ձեռնադրության վերաբերյալ ավարտական քննությունները և նույնքան հաջողությամբ պաշտպանելով իր դիպլոմային աշխատությունը՝ «Աստվածաբանական մտքի զարգացումը Ա—Ե դարերում, տիեզերական ժողովների որոշումների լույսի տակ» թեմայով։

Սարկավագ է ձեռնադրվել 1959 թվականի մարտի 22-ին, իսկ կուսակրոն քահանա է օծվել 1961 թվականի հունիսի 4-ին, ձեռամբ Վեհափառ Հայրապետի։

Տ. Գրիգոր աբեղան այժմ Մայր Աթոռի դանձապահն է և վանքի դարբասընկալը։

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ՊԱԼՅԱՆ։— Ծնվել է 1934 թվականի մարտի 10-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում։ Ավազանի անունն է Խորեն։

Նախնական կրթությունն ստացել է Դամասկոսի Ս. Թարգմանչաց ազգային վարժարանում։

1946 թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք և իր միջնակարգ կրթությունն ստացել Լենինականում։

1955 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որի վեցամյա դասընթացն ավարտել է 1960 թվականին գերազանց գնահատականով։

1955 թվականի նոյեմբերի 27-ին ձեռնադրվել է սարկավագ։

Ճեմարանն ավարտելու առթիվ պաշտպանել է դիպլոմ՝ «Սիմեոն Երևանցի կաթողիկոս, կյանքն ու գրական վաստակը» վերնագրով ավարտական աշխատությամբ։

1961 թվականի հունիսի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի օրը, կուսակրոն քահանա է օծվել Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ձեռքով։

Տ. Մեսրոպ աբեղան այժմ վարում է Հոգևոր Ճեմարանի վերակացուի պաշտոնը։

ՆՈՐԸՆԾԱ ԱԲԵՂԱՆԵՐԸ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ։— Ծնվել է 1937 թվականի հուլիսի 5-ին, Ալեքսանդրեռի Սանջաքի Գրբգխան գյուղաքաղաքում։ Ավագանի անունն է Հակոբ։

Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի Նուպարյան վարժարանում, որն ավարտել է 1951 թվականին և ընդունվել է Անթիլիասի դպրեվանքը, որտեղ սովորել է չորս տարի։ 1955—1957 թվականներին աշակերտել է Բեյրութի էշրեֆիե թաղամասի կենտրոնական բարձրագույն վարժարանին։

1957 թվականի սեպտեմբերին ներգաղթել է և ընդունվելով հոգևոր ճեմարանի Ա լսարանը, նույն թվականի դեկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ։

Ճեմարանն ավարտել է 1960 թվականին և պաշտպանելով «Օրմանյան սրբազանի կյանքն ու գործունեությունը» թեմայով ավարտաճառը, ստացել է վկայական։

1961 թվականի հունիսի 4-ին, Վեհափառ Հայրապետի ձեռքով, ձեռնադրվել է կուսակրոն քահանա։

Տ. Ներսես արեղան այժմ Մայր Տաճարի լուսարարապետի օգնականն է և «Էջմիածին» ամսագրի քարտուղարը։

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ ԳԱՐԱՋՅԱՆ։— Ծնվել է 1935 թվականի ապրիլի 13-ին, Ֆրանսիայի Վիեն քաղաքում։ Ավագանի անունն է Հակոբ։

Նախնական կրթությունն ստացել է ֆրանսիական դպրոցում։

1947 թվականին ներգաղթել է և Երևանում ստացել միջնակարգ կրթություն։

1955 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը և 1957 թվականի հոկտեմբերի 12-ին ձեռնադրվել է սարկավագ։

1960 թվականին ավարտել է Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը։

Ճեմարանն ավարտելու առթիվ հաջողությամբ պաշտպանել է իր գրած դիպլոմային աշխատանքը՝ «Տաթևի դպրոցի դերը մեր եկեղեցական և մշակութային պատմության մեջ» վերնագրով։

1961 թվականի հունիսի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի օրը, կուսակրոն քահանա է ձեռնադրվել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ձեռքով։

Տ. Եղիշե արեղան այժմ վարում է Մայր Աթոռի մատակարարի պաշտոնը։